ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն ________ Հ. Գասպարյան

«____» ----------------------2022 թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

________ՀՀ Լոռու մարզի ք.Վանաձորի________

Հ.Թումանյանի անվան թիվ 3 հիմն. դպրոցի 3բ դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Ավագյան Ամինե

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2022-2023» ուստարի

## ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Ներածություն ( դասարանի ընդհանուր բնութագիրը)

2022-2023 ուսումնական տարում III բ դասարանում սովորում են 35 աշակերտներ (18 աղջիկ, 17 տղա): Ձևավորված է աշակերտական համախմբված համակազմ: Երեխաները սիրում են սովորել, ֆիրզիկապես առողջ են, ակտիվ, շարժուն, կենսուրախ: Այս ուսումնական տարում դասարանը համալրվեց մեկ նորեկ աշակերտով: Դասընկերներն ուշադիր և հարգալից վերաբերմունք են ցուցաբերում նորեկին:

2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՔԱԽԱՏԵՄՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հերթապահության գրաֆիկի կազմում, ստեղծել «Կազմակերպական անկյուն»

Նախատեսվում են՝

1. Էքսկուրսիաներ
2. Այցելություն թանգարաննեձր, պատկերասրահ
3. Ֆիլմերի ցուցադրություններ, քննարկումներ
4. Կավճանկարի մրցույթներ
5. «Ընթերցասեր մանուկներ» վահանակի ստեղծում
6. Բարեսիրական ակցիա՝ «Օգնում եմ դպրոցիս գրադարանին»
7. Ստեղծե՛լ «Մանկական պատկերասրահ» և « Ոսկեձեռիկ» վահանակներ
8. Ցուցահանդես, ստուգատեսների կազմակերպում
9. Դասարանական պարբերաթերթի ստեղծում

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Ձևավորել անհատ, որը հազում է ազգային և համամարդկային արժեքները, մշակութքային և քրիստոնեական արժեքները, հարգում է այլոց կրոնը: Մշտապես հետևել խոսքի մաքրությանը: Ապահովել տարիքային բնութագրին համապատասխան հոգևոր որակների զարգացում:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Ձևավորել անհատ, որն ունի գեղեցիկն ընկալելու, զգալու, արարելու, ստեղծագործելու կարողություն, զարգացնել շրջապատող աշխարհի գեղեցկությունն ընկալելու որակներ: Ծանոթացնել արվեստի և մշակույթի տարբեր բնագավառներին:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Ձևավորել, դաստիարակել հայրենիքի պաշտպանությանը ծառայելու պատրաստ սերունդ: Ծանոթացնել հայ ժողովրդի պատմության հերոսական էջերին, ազգային բանակի նորօրյա հերոսներին: Կազմակերպել հանդիպումներ, լինել ռազմագիտության կաբինետում:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Ձևավորել տարիքային զարգացման բնութագրին համեմատ, ֆիզիկական որակներ: Մշտապես հետևել երեխաների ճիշտ կեցվածքին, մասնավորապես նստելիս, գրելիս: Ապահովել լիցքաթափող մասերի իրական դասերի միջնամասում (բոլոր դասերին):

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Ձևավորել աշխատանքային նախնական հմտություններ, ինքնասպասարկման կարողություն: Դաստիարակել այլոց աշխատանքը հարգելու, գնահատելու ունակություն: Մասնակից դարձնել դասասենյակի մաքրությունը պահպանելու աշխատանքին, դպրոցական շաբաթօրյակներին:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Կարևորել շրջակա միջավայրն աղտոտումից պաշտպանելու հարցը: Տնկել տնկիներ, աճեցնել և խնամել սենյակային բույսերը: Էքսկուրսիաները ծառայեցնել ճանաչելուն և ահպանելուն հայրենի բնության գողտրիկ անկյունները: Մասնակցել դպրոցի բակի ծաղկապատման աշխատանքներին:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Ընդլայնել ընտանիք-դպրոց կապը: Ծնողական համայնքին մշտապես իրազեկել և մասնակից դարձնելօ դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին: Տեղեկացնել ընթացքի և արդյունքների մասին, նշել ձեռքբերումները, հաջողությունները:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը | կատարողներ |
|---|---|---|---|
| 1 | Ընտրել դասարանի ավագ, աշկոմ, սահմանել հերթապահություն | 2.IX | դասվար |
| 1 | Հրավիրել ծնողական ժողով, ընտրել ծնողական խորհուրդ | 9 .IX | դասվար |
| 2 | Էքսկուրսիա դեպի գրադարան: | 16 .IX | դասվար |
| | Ցերեկույթ «Իմ գրադարան» | 23 .IX | ծնողկոմիտ, մատենձնագետ |
| 1 | Զրույց՝ «Իմ քաջ նախնիները և նորօրյա հերոսները» | 19. IX | դասվար |
| 1 | Զրույց՝ «Ինչպես եմ վերաբերվում ինձնից մեծերին և փոքրերին» | 1. X | դասվար, |
| 2 | Քննարկում՝ «Լեզուներն իմ կյանքում» | | օտար լեզուների ուսուցիչներ |
| 1 | Սահանկարի դիտում, հայ երաժիշտներ շարքից՝ Ալ. Սպենդիարյան | 7.X | դասվար |
| 2 | Այցելել երկրագիտական թանգարան | | |
| 1 | Զրույց քննարկում՝«Համակարգչային խաղերը և ես» | 14. X | դասվար |
| 2 | Բացօթյա ընթերցաքնություն | | |
| 1 | Հարստացնել «Ընթերցասեր մանուկներ» վահանակը | 21. X | դասվար |
| 2 | Էքսկուրսիա դեպի աշնանային պուրակ | | աշակերտներ |
| 1 | Ծնողական ժողովի անցկացփում՝ «Համակարգիչն իմ երեխայի կյանքում» զրույց քննարկում: | 18. XI | դասվար |

| | | | |
|---|---|---|---|
| 2 | Գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցում բեմականացում | | |
| 1 | «Գրական թրթովանքներ» գրքույկի ձևավորում | 25. XI | դասվար |
| 2 | Բարեսիրական ակցիա «Օգնում եմ հարազատ դպրոցիս գրադարանին» | | դասարան |
| 1 | «Ոսկեձեռիկ» վահանակի հարստացում | 2. XII | դասարան |
| 2 | Դաստիարակչական բնույթի ստեղծագործությունների ընթերցում | | դասվար |
| 1 | «Մանկական պատկերասրահ» վահանակի ստեղծում | 9. XII | |
| 2 | Դասարանական պարբերաթերթի ստեղծում (անվան ընտրություն) | | |
| 1 | Ներկայացման դիտում, քննարկում | 16. XII | |
| 2 | Զրույց՝ «Ինչպե՞ս դիտել ներկայացումը» | | |
| 1 | Զրույց՝ «Սպորտն իմ կյանքում» | 23. XII | դասվար, |
| 2 | «Իմ իրավունքներն ու պարտականությունները: Իրավիճակների բեմականացում, քննարկումներ» | | Ֆիզկուլտուրայի ուսուցիչ |
| 1 | Սեփական ստեղծագործությունների ընթերցում, ընտրություն (պարբ.) | 13. I | դասվար |
| 2 | Խմբագրիկան խորհրդի ընտրություն (լրագրող, սրբագրող, նկարիչներ) | | դասարան |
| 1 | Հրավիրել ծնողական ժողով | 20. I | |
| 2 | Նախապատրաստվել «Ուրախ ամանոր» ցերեկույթին: | | |
| 1<br>2 | Զրույց՝ «Ամանորն աշխարհի տարբեր երկրներում»: Ցերեկույթի անցկացում: | 27. I | |
| | I I կիսամյակ | | |
| 1 | Զրույց՝ «Ես մի զարկն եմ քո բազկի…» | 3. I I | դասվար |

| | | | |
|---|---|---|---|
| 2 | Ցերեկույթ՝ «Իմ հզորացող երկիր» | | |
| 3 | Վիկտորինա՝ «Հայոց բանակի անվեհեր քաջերը» | | |
| 1 | Զրույց՝ «Բուն բարեկենդան» | 10. I I | |
| 2 | Այցելություն երկրագիտական թանգարան | | |
| 1 | Էքսկուրսիա՝ «Բնությունն իմ շուրջը»(դիտումներ) | 17. I I | |
| 2 | «Մտքի տնակներ» վահանակի ստեղծում: «Գիրքն իմ կյանքում» | | |
| 1 | Զրույց՝ «Բույսերի խնամքը» | 24. I I | |
| 2 | Վահանակ՝ «Իմ ձեռքերով» | | |
| 1 | Ցերեկույթ՝ «Ծաղկեփունջ մայրիկիս» | 10. I I I | |
| 2 | Էքսկուրսիա՝ «Արթնացող բնություն» | | |
| 1 | Այցելություն հացաթխման արտադրամաս | 24. I I I | |
| 2 | Ցուցահանդեսի բացում՝ «Փոքրիկ նկարչի մեծ աշխարհը» | | |
| 1 | «Մայրիկների տոն» փոքրիկ ցերեկույթ նվիրված մայրիկներին | 7. IV | |
| 2 | Տոնական բացիկի պատրաստում հետաքրքիր կոմպոզիցիաներ | | |
| 1 | Բնությունն իմ շուրջ: Ինչպե՞ս պահպանել մեր մոլորակը: | 19. IV | |
| 2 | Թափոնների օգտագործում | | |
| 1 | Զրույց՝ «Ի՞նչը կփոխեի իմ շուրջը» թեմայով | 21. IV | |
| 2 | Կենդանիները մեր բարեկամներն են | | |
| 1 | Զրույց՝ «Ի՞նչ դեր ունի ընտանիքը իմ կյանքում» «Ես սիրում եմ իմ ընտանիքը» | | |
| 2 | «Հաղթանակների ամիս» | 5. V | |
| 1 | Զրույց Հայաստանի նրա քաջորդիների սխրագործությունների մասին | 19. V | |

| | | | |
|---|---|---|---|
| 2 | Զրույց՝ «Իմ ձեռքբերումները այս ուսումնական տարում» | 26. V | |